

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 37/6

ք.Երևան

29 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ Արարատյան մաքսատուն-վարչության պետի տեղակալի 25.05.2018թ. N43 որոշման դեմ Գուրգեն Սիմոնյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Գուրգեն Սիմոնյանը հայտնում է, որ 18.05.2018թ.-ին իր անունով ՀՀ տարածք է ներմուծել «TOYOTA CAMRY» մակնիշի (2013թ. նույն.N4T4BF1FK5ER371601) ավտոմեքենա, մաքսային հայտարարագիր N05100033/180518/0029623: Մեքենան Գուրգեն Սիմոնյանը ձեռք է բերել Վրաստանում, որի համար վճարել է 5500 ԱՄՆ դոլար: Սակայն ավտոմեքենայի մաքսազերծման ժամանակ (Արարատյան մաքսատան N43 որոշում) իր կողմից վճարված 5500 ԱՄՆ դոլարն արժանահավատ չի համարվել:

Գուրգեն Սիմոնյանն ավտոմեքենան գտել է վրացական www.autopapa.ge կայքից, որը շուրջ 10 օր մնացել է կայքում (կից ներկայացվում են կայքից նկարներ): Անհրաժեշտության դեպքում կներկայացվեն նաև էլեկտրոնային տարբերակները: Ներկայացված է նաև Վրաստանի ՃՈ-ում կնքված առուվաճառքի պայմանագիրը, որտեղ նշված է գումարը:

Մեքենան եղել է շատ լուրջ վթարված, որի համար Գուրգեն Սիմոնյանը վճարել է 5500 ԱՄՆ դոլար:

Ելնելով վերոգրյալից՝ Գուրգեն Սիմոնյանը խնդրում է թույլատրել վերանայելու N 43 որոշումը (կամ նվազեցնելու) և մեքենան մաքսազերծել ըստ առկա հաշիվ ապրանքագրի, այսինքն՝ ըստ փաստացի ձեռք բերված գնի:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ԿԱ ՊԵԿ Արարատյան մաքսատուն-վարչության պետի տեղակալի կողմից 25.05.2018թ. կայացվել է N43 որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում), որում նշվել է հետևյալը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ Արարատյան մաքսատուն-վարչության պետի տեղակալը ուսումնասիրելով Գուրգեն Սիմոնյանի կողմից 18.05.2018թ. թիվ 05100033/180518/0029623 տարանցիկ հայտարարագրով ՀՀ ներմուծված «TOYOTA CAMRY» մակնիշի (ձախ դեկ) 2013թ. արտադրության ավտոմեքենայի համար ներկայացված ավտոմեքենայի մաքսային արժեքը պարզել է, որ Գուրգեն Սիմոնյանի կողմից 18.05.2018թ. թիվ 05100033/180518/0029623 տարանցիկ հայտարարագրով ՀՀ ներմուծված «TOYOTA CAMRY» մակնիշի (ձախ դեկ) 2013թ. արտադրության ավտոմեքենա, որի համար ձեռք բերման փաստաթուղթ է ներկայացրել թիվ 1404859 հաշիվ ապրանքագիրը, որում ձեռք բերման արժեքը նշված է 5500 ԱՄՆ դոլար:

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 267-րդ հոդվածի 3-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն այն դեպքում, երբ առկա են հիմնավոր պատճառներ

ենթադրելու, որ նույն հոդվածի 1-ին կետում նշված՝ ֆիզիկական անձի կողմից ներկայացված փաստաթղթերը կամ համաշխարհային փոստային միության ակտերով նախատեսված՝ միջազգային փոստային առաքանիներին ուղեկցող փաստաթղթերը պարունակում են ոչ հավաստի տեղեկություններ, եթե ֆիզիկական անձը, նույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան, չապացուցի անձնական օգտագործման ապրանքների արժեքի հաստատման համար ներկայացված փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների հավաստիությունը և 5-րդ ենթակետի համաձայն այն դեպքում, երբ առկա է ձեռքբերման երկրում նույնանման ապրանքների այն շուկայական արժեքի հետ անձնական օգտագործման ապրանքների հայտագրված արժեքի անհամապատասխանություն, ըստ որի այդ նույնանման ապրանքները վաճառվում կամ առևտրի սովորական (շուկայական) պայմաններում ներկայացվում են վաճառքի համար, ապա մաքսային մարմնի պաշտոնատար անձը սահմանում է ապրանքների մաքսային արժեքը՝ մաքսային մարմնի տրամադրության տակ գտնվող՝ նույնանման ապրանքների մասին գնային տեղեկությունների հիման վրա, այդ թվում՝ նույնանման ապրանքների մանրածախ վաճառք իրականացնող օտարերկրյա կազմակերպությունների կատալոգներում և կայքերում նշված տվյալների հիման վրա, հաշվի առնելով ֆիզիկական անձի կողմից ներկայացված տեղեկությունները:

Ղեկավարվելով վերոնշյալ իրավական նորմի պահանջով Արարատյան մաքսատուն-վարչության կողմից ուսումնասիրվել են «TOYOTA CAMRY» մակնիշի (ծախ դեկ) 2013թ. արտադրության ավտոմեքենայի վերաբերյալ www.myauto.ge կայքում առկա գները և մաքսային մարմնի տրամադրության տակ գտնվող գնային տեղեկությունները: Համադրելով Գուրգեն Սիմոնյանի կողմից ներկայացված փաստաթղթերը և տեղեկությունները մաքսային մարմինների տեղեկատվական բազայում առկա, ինչպես նաև վերոնշյալ կայքերում առկա տեղեկությունների հետ ակնհայտ է դառնում, որ Գուրգեն Սիմոնյանի կողմից ներկայացված ավտոմեքենայի ձեռքբերման գինն էականորեն ցածր է նույնանման ապրանքների համար նախատեսված գներից:

Արդյունքում որոշվել է Գուրգեն Սիմոնյանի կողմից ներկայացված փաստաթղթերը, տեղեկությունները և դրանց հիման վրա հայտարարագրված մաքսային արժեքը համարել ոչ արժանահավատ և 18.05.2018թ. թիվ 05100033/180518/0029623 տարանցիկ հայտարարագրով ՀՀ ներմուծված «TOYOTA CAMRY» մակնիշի (ծախ դեկ) 2013թ. արտադրության ավտոմեքենայի մաքսային արժեքը որոշվել է 9600 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 267-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ Մաքսային մարմինն իր տրամադրության տակ գտնվող՝ նույնանման ապրանքների գնի մասին տեղեկատվության հիման վրա անձնական օգտագործման ապրանքների արժեքը որոշում է հետևյալ դեպքերում՝

4) հիմնավոր պատճառների առկայություն՝ ենթադրելու, որ սույն հոդվածի 1-ին կետում նշված՝ ֆիզիկական անձի կողմից ներկայացված փաստաթղթերը կամ Համաշխարհային փոստային միության ակտերով նախատեսված՝ միջազգային փոստային առաքանիներին ուղեկցող փաստաթղթերը պարունակում են ոչ հավաստի տեղեկություններ, եթե ֆիզիկական անձը, սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան, չապացուցի անձնական օգտագործման ապրանքների արժեքի հաստատման համար ներկայացված փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների հավաստիությունը:

5) ձեռքբերման երկրում նույնանման ապրանքների այն շուկայական արժեքի հետ անձնական օգտագործման ապրանքների հայտագրված արժեքի անհամապա-

տասխանություն, ըստ որի այդ նույնանման ապրանքները վաճառվում կամ առևտրի սովորական (շուկայական) պայմաններում ներկայացվում են վաճառքի համար:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որպես անձնական օգտագործման ապրանքների արժեքի մասին տեղեկատվություն՝ մաքսային մարմինը կարող է օգտագործել նաև նույնանման ապրանքների մանրածախ վաճառք իրականացնող օտարերկրյա կազմակերպությունների կատալոգներում և կայքերում նշված տեղեկությունները՝ հաշվի առնելով ֆիզիկական անձի կողմից ներկայացված տեղեկությունները:

Քննարկվող դեպքում ղեկավարվելով վերոնշյալ իրավական նորմերի պահանջներով Արարատյան մաքսատուն-վարչության կողմից ուսումնասիրվել են «TOYOTA CAMRY» մակնիշի (ծախ դեկ) 2013թ. արտադրության ավտոմեքենայի վերաբերյալ www.myauto.ge կայքում առկա գները և մաքսային մարմնի տրամադրության տակ գտնվող գնային տեղեկությունները: Գուրգեն Սիմոնյանի կողմից ներկայացված փաստաթղթերը համադրելով մաքսային մարմնի տեղեկատվական բազայում, ինչպես նաև վերոնշյալ կայքում առկա տեղեկությունների հետ մաքսատան աշխատակիցները եկել են եզրակացության, որ Գուրգեն Սիմոնյանի կողմից ներկայացված ավտոմեքենայի ձեռքբերման գինն էականորեն ցածր է նույնանման ապրանքների համար նախատեսված գներից: Արդյունքում Գուրգեն Սիմոնյանի կողմից ներկայացված փաստաթղթերը, տեղեկությունները և դրանց հիման վրա հայտարարագրվող մաքսային արժեքը համարվել է ոչ արժանահավատ և վերը նշված ավտոմեքենայի մաքսային արժեքը որոշվել է 9600 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

Հանձնաժողովը ևս գտնում է, որ «TOYOTA CAMRY» մակնիշի (ծախ դեկ) 2013թ. արտադրության ավտոմեքենան ձեռք է բերվել 5500 ԱՄՆ դոլարով, ըստ էության, արժանահավատ չեն:

Մասնավորապես, Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են www.myauto.ge կայքը, Վրաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության տարածքում «TOYOTA CAMRY» մակնիշի (ծախ դեկ) 2013թ. արտադրության ավտոմեքենաների վաճառքի գների վերաբերյալ տեղեկատվությունը: Արդյունքում պարզվել է, որ նույն մակնիշի և թողարկման տարեթվի ավտոմեքենաների իրացման գները կազմում են 9600 ԱՄՆ դոլարից մինչև 12000 ԱՄՆ դոլար:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ Որոշմամբ «TOYOTA CAMRY» մակնիշի (ծախ դեկ) 2013թ. արտադրության ավտոմեքենայի համար որոշված մաքսային արժեքն իրատեսական է և առավել ճշգրիտ է արտացոլում նշված ավտոմեքենայի մաքսային արժեքը:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Արարատյան մաքսատուն-վարչության պետի տեղակալի 25.05.2018թ. N43 որոշման դեմ Գուրգեն Սիմոնյանի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ